# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հունիսի 2021 թվականի N 342-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N12-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 38-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անվավեր ճանաչել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 7-ի «Պետիկ Գարեգինի Ավդալյանին նախագծման թույլտվություն տալու մասին» N 12-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 04
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հունիսի 2021 թվականի N 343-Ա

### ՊԵՏԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Պետիկ Գարեգինի Ավդալյանի դիմումը (մուտք՝ 04.06.2021-ի. ՄՀ 73-21) `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Պետիկ Գարեգինի Ավդալյանին տալ բնակելի տան կառուցման նախագծման թույլտվություն:
2..Պետիկ Գարեգինի Ավդալյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 07
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հունիսի 2021 թվականի N 344-Ա

## ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ ԹԱՂԱՄԱՍ 7 ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 114 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վասուրակ Վաղինակի Պողոսյանի (անձնագիր 29 13 575075 ՌԴ Կալուգա քաղաքի բաժնի կողմից տրված 28.05.2013թ.) կողմից լիազորված անձի (լիազորագիր 40 ԱԲ 0676454) Բորիս Արտավազդի Բարոյանի (անձնագիր՝ AT 0561350 , տրված՝ 10.09.2020-ին) դիմումը (մուտք՝ 20.05.2021-ի ՄԴ-237-21), անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 2384690 վկայականը, «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումով հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետը, 50-րդ կետը՝ նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 7, Գետափնյա փողոց, թիվ 114 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-206-005) Վասուրակ Վաղինակի Պողոսյանի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,109հա հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 315.97քմ մակերեսով՝համաձայն «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի.
1) Բնակելի տունը՝ 120,22քմ,

2) Բաց պատշգամբ՝ 5,20քմ և 5,67քմ
3) Պարիսպը՝ 1,48քմ և 2,22քմ
4) Կաթսայատուն 4,50քմ,
5) Տնտեսական շինություն 68,47քմ և 108,21քմ

2. Հողամասի սահմանները որոշվում են՝ համաձայն «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող Վասպուրակ Վաղինակի Պողոսյանին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝ 324818 (երեք հարյուր քսանչորս հազար ութ հարյուր տասնութ) ՀՀ դրամ:

4. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Տնատիրությանը ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, փողոց Գետափնյա, տուն 114 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 7, Գետափնյա փողոց, թիվ 114 բնակելի տուն փոստային հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 07
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2 22-41 tashir.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

07 հունիսի 2021 թվականի N 345-Ա

### ՔԻՇՄԻՇ ԴԱԼԱԼՈՅԱՆԻՆ, ԱՆԱՍՏԱՍ ԴԱԼԱԼՈՅԱՆԻՆ, ԷԴԳԱՐ ԴԱԼԱԼՈՅԱՆԻՆ ԵՎ ՆՈՅԵՄԶԱՐ ԴԱԼԱԼՈՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան Քաղաքացիներ Քիշմիշ Դալալոյանը, Անաստաս Դալալոյանը, Էդգար Դալալոյանը և Նոյեմզար Դալալոյանը հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2021 թվականի մայիսի 12-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը. Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների՝ Տաշիր համայնքի Լեռնահովիտ բնակավայրի տարածքում 4 տարբեր չափսերի, տարբեր կարգի և նշանակության 2,107 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Քիշմիշ Դալալոյանի, Անաստաս Դալալոյանի, Էդգար Դալալոյանի և Նոյեմզար Դալալոյանի սեփականությունը,որոնք իրավահարաբերության պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով համարվում են հարկվող օբյեկտ: Հողամասերի համար 2008-2020 թվականների համար վճարման ենթակա հարկը կազմում է 280.680 (երկու հարյուր ութսուն հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ինչը մինչև 2021 թվականի մայիս ամիսը չի վճարվել:

Քաղաքացիներ Քիշմիշ Դալալոյանի, Անաստաս Դալալոյանի, Էդգար Դալալոյանի և Նոյեմզար Դալալոյանի հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 178642 (հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր քառասուներկու ) ՀՀ դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 102038

(հարյուր երկու հազար երեսունութ) ՀՀ դրամի չափով:
2021 թվականի մայիսի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի հունիսի 7-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել քաղաքացիներ Քիշմիշ Դալալյանը, Անաստաս Դալալյանը, Էդգար Դալալյանը և Նոյեմզար Դալալյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 31 . 05 . 2021) : (Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացիներ Քիշմիշ Դալալյանի, Անաստաս Դալալյանի, Էդգար Դալալյանի և Նոյեմզար Դալալյանի բացակայությամբ):
3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.
ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:
Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1 ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:
Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:
Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:
Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ և 447-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 . Քաղաքացիներ Քիշմիշ Դալալյանից, Անաստաս Դալալյանից, Էդգար Դալալյանից և Նոյեմզար Դալալյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 280. 680 (երկու հարյուր ութսուն հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 178.642 (հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր քառասուներկու ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 102 . 038 (հարյուր երկու հազար երեսունութ) ՀՀ դրամ ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանմասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:

6.Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275085034 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 07

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հունիսի 2021 թվականի N 346-Ա

## ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 8-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1055-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ) ենթակետը, 50-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր քաղաքի վարչական տարածքում գտնվող 06-008-0209-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0. 00480 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:
2.Հողամասի սահմանները որոշվում են «Արմդոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3.Հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր 7-րդ թաղամաս, Վ.Սարգսյան փողոց, թիվ 122/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 07
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2021 թվականի N 347-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՏԱՇԻՐ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, 14-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ԱՐԵՎԱՅԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-008-0293-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԽԻԹԱՐ ՎՈՒՍՏԵՐԻ ԱՎԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Մխիթար Վուստերի Ավետյանի (ծնված՝ 17.11. 1995-ին)դիմումը (մուտք՝ 04.05.2021, ՄԴ201-21), ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի ապրիլի 13-ի ԼԴ3/0641/02/20 վճիռը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ) ենթակետով, 50-րդ կետով, նկատի ունենալով, որ տան կառուցապատման և սպասարկման համար օրենքով հատկացված 3774,1քմ վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով, որ, և այն, որ շինությունները կառուցվել են 1991 թվականին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Մխիթար Վուստերի Ավետյանի սեփականության իրավունքը Լոռու մարզի, համայնք Տաշիր, քաղաք Տաշիր, 14-րդ թաղամաս Արևային փողոց, թիվ 7 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0293-0024) բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական հատկացված 3774,1 քմ հողամասինկատմամբ:

2. Հողամասի սահմանային չափերը որոշվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Ճանաչել Մխիթար Վուստերի Ավետյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի 06-008-0293-0024 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 3774,1 քմ մակերեսով հողամասի վրա կառուցված բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «Արտյոմ Սաթանյան» ԱՁ-ի կողմից կազմված շինությունների բնութագրի:

4. Տնատիրությանը տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 14-րդ թաղամաս, Արևային փողոց, թիվ 7 բնակելի տուն փոստային հասցեն:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 08
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2021 թվականի N 348-Ա

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/58» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. մայիսի 21-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային կահույքի մատակարարման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/58-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հունիսի 08
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2021 թվականի N 349-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N202-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասը Սամվել Միսակի Պետրոսյանին վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» N202-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հունիսի 08
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

08 հունիսի 2021 թվականի N 350-Ա

## ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N714-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 36-դ հոդվաի 1-ին մասի 2-րդ կետով, 38-րդ հոդվածով և մք ընդունելով Հայաստանի հանրապետությա վարչական դատարանի 05.02.2021-ի թիվ ՎԴ8182/05/20 վարչական գործով վճիռը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անվավեր ճանաչել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնք ղեկավարի «Դավիթ Բարոյանին հողի հարկի գումարի պահանջներկայացնելու մասին» N714-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հունիսի 08
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021 թվականի N 351-Ա

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/58» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. մայիսի 21-ի N2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «Դամկար» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Դամկար» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային կահույքի մատակարարման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/58-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2021թ. հունիսի 11
ք.Տաշիր